

ՄԱՀԱՅՈՒՑԱԿ

Ս. Աթոռոյս միաբան Ռւրարակիր Մարտիրոս տէր Յովհաննէսեան՝ անցեալ սեպտեմբեր ամսոյ 24-ին փոխեցաւ յաստեացս, և մարմինը միաբանութեան գերեզմանատան մէջ ամփոփեցաւ:

Սոյն սա ծնած էր 1847 թուականին հոկտ. ամսոյ 7-ին Ղլշարունիս Արասխաձոր Գաւառի Փանիկ զեղջ մէջ: Իսկ 1866 թուականին սեպ. 4-ին արժանացած էր Ռւրարակրութեան:

Երբարեւ իւր հեղաբարոյ և խոհմփարութիւնն ոչ միայն համայն Ս. ուխտիս սէրը զրաւած էր, այլ և ըստ բաւականին հմուտ գոլով Հայերէն լեզուիս և միանգամայն գործունեաց և ժիրիւր պաշտօնին մէջ, մեծ ցաւ ներգործեց ամենեցուն:

Ս. Արուստղէմի շատ ուխտատեղիներուն մէջ եղածին նման, Իւթղէհէմի Այրին մէջ ալ, երեք կրօնական ազգք՝ Հայք, Յոյնք և Ատաիւնք պատկեր զնկու և պատարագելու հաւատարարութեանն ենթարկուի, ի հնուց ի վեր երեք ազգերն ալ իրենց որոշեալ ժամանակներուն կը կատարէին իրենց որոշեալ պաշտամունքներն, և իւրաքանչիւրին յատուկ անօթներէն զատ, սրբավայրին վերաբերեալ ընդհանուր նորոգութիւններն երեք ազգաց կողմէն կը լայն հաւատարութեամբ:

Յայտնի է որ ասկից մէկ երկու ամիս առաջ, զեռ Տեղապահ Սրբազանը չհրաժարած, Ատաիւնք յիշեալ Ս. Այրին խորանին վարագոյրն և Հայոց և Յունաց պատկերներն այլոք էին գործունի կերպով, և

յետոյ վարագոյրը իրենք միայն նորոգել կուղէին, որպէս զե այրին նորոգութեան իրաւունքը միայն իրենք ստանալով, որ մ'ալ Հայոց և Յունաց պատկերները զնկ չտալու իրաւունք ունենան, և այլը իրենց սեպհականն: Ասկից մեծ վէճ մը ըլլալով, մէկ կողմէն Հայոց և Յունաց, և միւս կողմէն Ատաիւնց մէջ, այն ժամանակը հեռագրութեան ուղեցուցաւ նաեւ հոս Ազգային Վարչութեան Ազգին իրաւունքը յարգուելու մասին Բ. Գունէն ստիպողական հրաման խնդրուելով: Այն միջոցներուն, թէև Ազգային վարչութիւնը Տեղապահ Սրբազանին պատուէր տուած էր որ Խառն ժողովոյ որոշում չտուած բաներուն համար Բ. Գունը չգիմէ, բայց Տեղապահ սրբազանը գործին ստիպողականութիւնը տեսնելով, առանց Խառն ժողովոյ որոշմանը ապաստելու Բ. Գուն զիմած և անոր արդար հրամանը խնդրած էր այս մասին, և պէտք եղած հրամանը իսկ զրկել տուած, որ յետոյ Խառն ժողովոյ կողմէն Տեղապահին յանցանք ալ համարուած էր:

Այժմ հաւատարիմ աղբիւրէ տուած տեղեկութիւննուս համեմատ այս խնդիրը կարգադրուել է երկոյ ազգաց իրաւանցը համեմատ, սա կերպով որ վարագոյրը կառավարութեան կողմէն պիտի նորոգուի եղեր, և երկոյ ազգաց պատկերներն ու զարդերն ալ պիտի դրուին եղեր, ինչպէս որ են եղեր ասկից առաջ: Արարատ (Պօլսոյ) Թիւ 45:

Արկուշարթի օրը կայարուհին մասնաւոր կերպիւ իր ներկայութեան ընդունեց արքունի ճարտարապետ Վսեմ Սարգիս և Յակոբ պէյերը, և անոնց ճարտարապետական տաղանդը գովելով Պէյլէրպէյի և Չարաղանի պալատներուն ծրագիրը խնդրեց: